**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, Հեռ. (0237)34441 ,*
*metsamormeria@yandex.ru*

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ2022ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ (ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ)

*16 սեպտեմբեր 2022 թ.* *ՀՀ Արմավիրի մարզ,Մեծամոր համայնք*

***Ս/թ. սեպտեմբերի 16-ին, ժամը 15:30 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտերի՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ, Ամասիա, Արգավանդ, Արևիկ, Բամբակաշատ, Գետաշեն, Հայկավան, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Փշատավան, Տարոնիկ և Մրգաշատ բնակավայրերի խմելու ջրամատակարարման ցանցերի կառուցման», «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկավան և Շենավան բնակավայրերի մանկապարտեզների կառուցման, Բամբակաշատ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման, Ակնալիճ բնակավայրի մանկապարտեզի մասնակի վերանորոգման, և ջեռուցման համակարգի կառուցման, Եղեգնուտ, Արազափ բնակավայրերի մանկապարտեզների և Ջանֆիդա բնակավայրի Վ. Սարգսյանի անվան մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցման», «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի հիմնանորոգման և Մեծամորի մշակույթի տան մեծ դահլիճի վերանորոգման, ջեռուցման համակարգի կառուցման և կահավորման», «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 8-րդ փողոցի ճանապարհի, Բամբակաշատ բնակավայրի Բամբակաշատ-Նոր Արմավիր, Բամբակաշատ և Հայկավան բնակավայրերի Բամբակաշատ-Հայկավան ճանապարհահատվածների հիմնանորոգման: ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի «Ակադեմիայի», «Վարդանի», Արտաշար բնակավայրի «Ախթամար», Վարդանաշեն բնակավայրի «Գյուղի սկզբի»,***

***Արագածի բնակավայրի «Զասպավի» Արևիկ բնակավայրի «Հովիկի», Մրգաշատ բնակավայրի «Ճլլիկներ 2-րդ», Մարգարա բնակավայրի «3-րդ փողոցի», Արմավիր բնակավայրի «Գագիկի պան մոտ», Տարոնիկ բնակավայրի «Տրուբի», Արգավանդ բնակավայրի «Վալոդի», Բամբակաշատ բնակավայրի «Բաշնիայի», Փշատավան բնակավայրի «Ամարի գոմի մոտ», Ջրաշեն բնակավայրի «Սարի պակի», Ակնալիճ բնակավայրի «Կրակակետի», Երասխահուն բնակավայրի «Ղաչաղի», Նոր Արմավիր բնակավայրի «Սպյոպի հողի պակի», Այգեշատ բնակավայրի «Կոկոլի» խորքային հորերի վերականգնման», «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի 2Բ1, 3Բ, 4Բ2, 5Բ, 6Բ2 և 2-րդ թաղամասի 1Բ, 2Բ, 3Բ շենքերի վերելակների փոխարինման» աշխատանքների շրջանակներում նախատեսվող հայտերի վերաբերյալ հանրային քննարկումներ: Մեծամոր համայնքի ղեկավարի հրավերով հանրային քննարկմանը ներկա էին համայնքի ավագանու անդամներ, համայնքի և բնակավայրերի բնակիչներ, վարչական ղեկավարներ, ինչպես նաև կազմակերպությունների աշխատակիցներ: Հանրային քննարկումը վարում էր Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանը՝ ներկայացնելով ծրագրերի ուղղությամբ պարված աշխատանքների և ծրագրերի դրական ազդեցության վերաբերյալ մանրամասնություններ: Համայնքի ղեկավարը ամփոփելով հանրային լսումը՝ բնակիչների և բոլոր ներկաների կողմից ստացավ հավանություն և դրական կարծիք ծրագրերի կատարման վերաբերյալ:***

*Քննարկումների պատասխանատու և վարող*
*Մեծամոր համայնքի ղեկավար՝* *Վ.Խաչատրյան*

*Քննարկումները արձանագրեց,*

*Աշխատակազմի քարտուղար՝* *Մ. Հովհաննիսյան*